ցաց, թէ չուկայիցն և թէ զպարիսպս քաղաքին ըստ տեղւոյն, կամ բռամբ սպիտակացուցանիցեն, կամ կարմիր դեղօք ներկիցեն, որպէս արարին իսկ, վասն պատուելոյ զեկօղ հրեշտակն Աղուանից իշխանին, տիրոջն չոշ քաղաքին։ Մինչ մերձեցաւ ժամանակն մտման նորին ի քաղաքս, հրամանն սաստկանայր հանդերձ տուգանօք թէ ոք ոչ արասցէ ըստ հրամանացն, և կարի փութացուցանէին։ Ի թերսհանան եղեալ նաւերն և կալերքն ներկեցան երանգօք, զարդարեալք անտի մինչև ի տօլմա պաղջան կարգեցան, ուրեք նաւք, ուրեք կալերք, երկու կալերք ի յիւսկիւտար գնացին առ ի բերել զեկօղն. ի յաւուր մտման նորին դղրդեցաւ քաղաքն, մեծ հանդէս եղև, և բազմութիւն ժողովրդեան և նաւակաց անթուելեաց, ի մէջ անկեալ ծովակն ստամպօլու և զալաթիու՝ սկսցեալ էր մինչև ի զվխիւլէն և ի տօլմապաղջան։ Աստի սկսեալ մինչև ի թէրսխանան 1400 հրացանք արձակեցան. և մինչ հանին ի ցամաքի բազում կարգօք և զարդարանօք շրջեցուցանելով՝ 7 ժամ ի քաղաքն տարեալ բազմեցուցին ի պատրաստեալ պալատն՝ ի ծայրն քաղաքին ի բարձրագոյն տեղւոջ ի քամակն էյիպու։ Բայց մինչ զայսքան փառս և զբարձրութիւնս ցոյց ետուն՝ տեսէք թէ զինչ եղև առ յապայ. զկնի չորից աւուրց՝ յորում աւուր եմուտ և հայր Պողոս վ. մեր, մեծ հրակիզութիւն եղև. ԺԲ ժամու աւուրն սկսաւ, տևեց մինչև ի յութ ժամ գիշերոյն, ասեն թէ այսպիսի հրակիզութիւնք չեն տեսեր. հողմն էր սաստիկ, սկսեալ ի ծովեզերէ պալաթոյն՝ զերիս լերինս քաղաքիս հանդերձ իւրօք ձորօքն այրեաց. բոցն 20 և այլ աւելի ճեղս բաժանեալ. չորս ազգին ևս մեծապէս վնասեաց, հայոց, յունաց, հրէից և տաճ[կ]աց։ Ասեն 50, 60, 1000 և այլ աւելի տուն և պալատ այրեալ. 60 վճարելու տեղիք այրեցան։ Հաճի մաթոսենց քարէ տունն ևս ոչ կարէ բնակիլ 13 եկեղեցի այրեցեալ, որոց մինն է հայոց, և այլն՝ յունաց. փաթրիքն յաւելի քան զձ քսակ բոլոր ճաղապեալ[1], զի չրաջակայ եղեալ տանց գինն վճարեալ, կանխապէս փլուզեալ, որով ապրեցոյց զպատրիարգական եկեղեցին, որ է Ֆէնէրն, բազում և ինչ և ապրանք և անձինք այրեցան. խ[ե]ղճութիւնք, անբնակութիւնք և ողորմելութիւնք բազումք...։

Գերյարգութեան քում
պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ վ. Սեբաստացի

1729 Օգոստոսի 23
ի 26 Էլանէ [Կ. Պոլիս]

ԼԹ.

«Սեփաննոս Ստեփանեան» Կամէնցացի՝ մեր ազգային մատենագրութեան մէջ աւելի ծանօթ է Ստեփանոս Ռոշքայ անուամբ (1690–1739)։ Ա. Մխիթար Աբբայ կը հաղորդէ շատ կարևոր ու մանրամասն տեղեկութիւններ՝ նոյն ատենի ազգային անցուդարձի և ծէսի շուրջ։ Այն կէտը՝ զոր հոս նամակին մէջն ալ կը շօշափէ՝ թէ կազմած ու սահմանած է ի Կեռլայ «զԵղբայրութիւնս ոմանս Աշխարհականաց.. ամենեցուն հաւանութեամբ թէ կղերց և թէ ժողովրդականաց»՝ կը հայի իր հաստատած երեք եղբայրութիւններուն, որ են. ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՒ ԱՆՆԱՅԻ. ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԵՒ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԵԱՆ. զամէնքն ալ հաստատած է 1729 թուականին՝ միշտ հետևեալ սկզբնաւորութեամբ. «Ստեփաննոս Ռոշքայ Սրբազանի Աստուածաբանութեան Վարդապետ, Վիգարիոս և Բրեբոզիտոս Ստանիսլաւօվու, աստանօր այցարար Եկեղեցեացս Հայոց

1. Ճապաղեալ անշուշտ։